Հաստատում եմ՝

Տնօրեն _____ Տ.Մնացականյան

<<Լուսակնի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի

2023-2024 ուս. տարվա Վ-դասարանի

Դասղեկի աշխատանքային տարեկան ծրագ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱԿՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N	ազգանուն	անուն	Հայրանուն	Ծննդյանօր ամիս, տարի	սեռը
1	Բաղդասարյան	Մարի	Արմանի	18.05.2023	
2	Բաղդասարյան	Տիգրան	Նիկոլի	24.10.2023	
3	Ալեքսանյան	Մանե	Խաչիկի	16.09.2023	

Դասագրքերի բաշխումը

		Մայրենի	Մաթեմ.	Ռուսերեն	Անգլերեն	Կերպար -վեստ	Թվ. գրագ.
1	Բաղդասարյան Մարի						
2	Բաղդասարյան Տիգրան						
3	Ալեքսանյան Մանե						

	Իմ հայրենիք	Բնություն	Տեխնոլ.	Երաժշտություն	Ազգ . երգ ու պար	Ֆիզկուլտ.	
1							
2							
3							

Կրթական դաստիրակչական աշխատանքների հիմնական ուղղություններ

1.Ներածություն (դասրանի ընդհանուր բնութագիրը)

5 դասարանում սովորում է 3 աշակերտ, որոնցից 1-ը տղա է , 2-ը՝աղջիկ: Հաշվի առնելով տարիքային զարգացման առանձնահատկությունները՝ ակնհայտ է դառնում, որ մի շարք դժվարություններ են ի հայտ գալիս, որոնց լուծման համար անհրաժեշտ է լինել համբերատար, զգոն և հետևողական: Միջանձնային բախումներն անխուսափելի են այս տարիքային փուլում: Յուրաքանչյուրն իր հերթին փորձում է ինքնահաստատվել, որը առիթ է հանդիսանում վեճերի, ընդհարումների: Իմ նպատակն է՝ աշխատել դասարանի բարձր առաջադիմության ուղղությամբ, ձևավորել կարգապահ, կազմակերպված, հանդուրժող, համերաշխ կոլեկտիվ, նպաստել աշակերտների ընդհանուր մտահորիզոնի ընդարձակմանը, աշխատել բարոյահոգեբանական կերտվածքի զարգացման ուղղությամբ, նպաստել քաղաքացիականության և ուսման նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ձևավորմանը: Բոլոր աշակերտներն էլ յուրահատուկ են,հետաքրքրասեր: Դասարանում կա գերազանց սովորող աշակերտներ:

2. Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

1. Կահավորել և ձևավորել դասասենյակը:
2. Հետևել դասասենյակի և շրջապատի մաքրությանը:
3. Ուշադրություն դարձնել աշակերտների արտահագուստին:
4. Դասարանում սահմանել հերթապահություն:
5. Ստեղծել ներկոլեկտիվային ինքնավարության մարմիններ՝ դասարանի ավագ, հերթապահներ, ընտրել ակտիվի կազմը:
6. Պայմաններ ստեղծել ինքնավարության մեջ սովորողների հանձնարարությունների պլանաչափ հերթափոխման համար, որպեսզի կատարողականությունն ու ղեկավարման կարողությունը ձևավորվեն միասնության մեջ:
7. Աշխատանք տանել աշակերտների ուսման առաջադիմության բարձրացման ուղղությամբ և հաստատել գիտակցական կարգապահություն :

8. Սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ: Ձևավորելսեր աշխատանքի նկատմամբ, դաստիարակել բարոյական և հոգևոր արժեքներ, պատասխանատու վերաբերմունք և աշխարհայացք:

9. Ապահովել աշակերտ-դպրոց-ծնող սերտ կապը: Նպաստել դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ:

10. Սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ, կապ պահպանել գրադարանի հետ:

11. Ամեն կերպ օգնել և աջակցել ետ մնացող աշակերտներին:

12. Ստեղծել փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ:

13. Ձևավորել համերաշխ աշակերտական կոլեկտիվ:

14. Ուշադրություն դարձնել աշակերտների սանիտարահիգիենիկվիճակին:

15. Ակտիվորեն մասնակցել դպրոցի հասարակական աշխատանքներին:

16. Կազմակերպել ուսումնադաստիարակչական, գիտաճանաչողական , ժամանցային էքսկուրսիաներ:

17. Մանկավարժական պրոցեսն ուղղել դպրոցականների համակողմանի զարգացմանը:

18. Կազմակերպել կոորդինացնել դաստիարակչական բոլոր ազդեցությունները, իրագործել դաստիարակչական աշխատանքի նկատմամբ կոմպլեքսային մոտեցում:

19. Դաստիարակչական աշխատանք կատարել դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ

20. Կազմակերպել սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ:

21. Օգնել թերացող աշակերտներին, հնավորինս ստեղծել նրանց ուսման համար նպաստավոր պայմաններ:

22. Վարել սահմանված փաստաթղթեր/աշխատանքային պլանի կազմում, դասամատյանի ձևավորում, լրացում, օրագրերի վերահսկողություն/:

23. Տեղեկություններ հաղորդել դպրոցի ղեկավարությանը աշակերտների առաջադիմության, հաճախման և վարքի մասին: Գործունեությունը համաձայնեցնել դպրոցական աշխատանքի մյուս բոլոր օղակների հետ՝ կողմնորոշվելով համադպրոցական տարեկան պլանով:

24. Կազմակերպել դպրոցականների պրակտիկ գործունեությունը տարբեր ձևերի ու մեթոդների նպատակահարմար զուգակցմամբ:

25. Ուսումնասիրել դպրոցականներին բնական պայմաններում, նրա կենսագործունեության պայմանների հետ միասնության մեջ/իրականացնել սովորողների հոգեբանամանկավարժական հետազոտում, հաշվի առնել անհատական զարգացման առանձնահատկությունները, ուժեղ և թույլ կողմերը, ընդունակություններ:

26. Մշտապես հաշվի առնել սովորողների անհատական և տարիքային առանջնահատկությունները, փոփոխությունները: Ծանոթանալ ընտանիքում առկա այն խնդիրների հետ, որոնք ազդում են սովորողի հոգեբանական վիճակի վրա և խոչնդոտում են ուսումնական գործընթացը:

27. Ծնողների հետ սահմանել վստահելի ու գործնական հարաբերություններ: Իրականացնել բարոյահիրավական գիտակցության ձևավորման ուղղությամբ տարվող միջոցառումների համակարգ/էթիկական ու իրավական զրույցներ լավագույն մարդկանց մասին հանդիպումներ, բանավեճեր, կինոդիտումներ ու քննարկումներ,ցուցափեղկերի ու անկյունների ձևավորում/:

3, ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ –
Անցկացնել զրույցներ Հայ առաքելական եկեղեցու, կրոնի դերի և նշանակության մասին թեմաներով, սերմանել նրանց մեջ բարու դրսևորումները: Անդրադառնալ եկեղեցական տոներին՝Սուրբ Զատիկ, Սուրբ Ծնունդ, ազգային ավանդույթների իմացությանն ու պահպանմանը: Երեխաներին զերծ պահել տարբեր աղանդների ազդեցությունից, բացատրել դրանց վնասակարության մասին: Երեխաների մեջ սերմանել փոխադարձ հարգանք միմյանց, մեծահասակների նկատմամբ: Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների՝ հայրենիքի հանդեպ ունեցած վերաբերմունքին , օրինապաշտ ու ազգասեր, պետականամետ քաղաքացու ձևավորմանը: Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ տարբեր եկեղեցիներ, պատմամշակութային հուշարձաններ՝ բացահայտելու և տերը դառնալու մեր հարստությանը: Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Երեխաներին հնարավորություն տալ ծանոթանալու իրենց հոգևոր և կրոնական ժառանգությանը՝ կազմակերպելով ինտերակտիվ հոգևոր զրույցներ աստվածաշնչյան ուսումնասիրություններ և թատերական ներկայացումներ: Խթանել երեխաներին զգալու իրենց հոգևոր արժեքները

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Հաճախակի կազմակերպել և մասնակցել գեղարվեստական միջոցառումներին, դիտել դաստիարակչական բնույթի ֆիլմեր, այցելել գեղագիտական կենտրոններ՝ պատկերասրահներ, գրողների տուն-թանգարաններ՝ բարձրացնելու աշակերտների գեղագիտական ճաշակը: Դասղեկի ժամերին խոսել գեղագիտական ճաշակի, էթիկայի կանոնների, գեղեցիկի ընկալման մասին: Հաճախակի դասարանի ձևավորումներ կատարել աշակերտների ջանքերով՝ բացահայտելու ճաշակը և գեղեցիկի հանդեպ ունեցած զգացողությունները:

ՌԱԶՄԱ_ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ –Զրույցների միջոցով աշակերտներին ծանոթացնել մեր հայրենիքի դարավոր պատմությանը, այդ պատմության քառուղիներում հայրենասիրությամբ աչքի ընկած անհատների կենսագրական տվյալներին: Աշակերտներին տալ հնարավորություն՝ վերլուծելու անհատների արարքները, դասեր քաղելու նրանց սխրանքներից, կյանքի դասերից: Դիտել ֆիլմեր Արցախյան հերոսամարտի, Հայոց ցեղասպանության մասին, հայ ժողովրդի ծագումնաբանության մասին, անցկացնել սեմինարներ, քննարկումներ, բանավեճեր՝ բացահայտելու 21-րդ դարի սերնդի մտածողությունը: Յուրաքանչյուր աշակերտ պետք է կրթվի և դաստիարակվի ,որպես մեր հայրենիքի ապագա նեցուկ,պաշտպան զինվոր:Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ֆիդայիների և հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Երեխաների հետ խոսել հայրենիքի մասին, որ միայն հողն ու ջուրը չէ, որ արժանի և ենթակա պաշտպանության նրա զավակների կողմից: Հայրենիքը նաև մի մեծ տուն է,ընտանիք,որի հետ մարդը պետք է աշխատի և որին պետք է ծաղկեցնի,ղեկավարի և դարձնի բարեկեցիկ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Աշակերտներին մասնակից դարձնել դպրոցական և արտադպրոցական միջոցառումներին: Հետևել ֆիզկուլտուրայի դասերին պատշաճ ներկայանալուն՝ ,,Առողջ մարմնում առողջ հոգի,,: Կազմակերպել միջդպրոցական սպորտլանդիաներ:Ուսուցչի կարևոր խնդիրն է հետաքրքրություն առաջացնել սպորտի նկատմամբ: Աշակերտների շրջանում բարձրացնել առողջ ապրելակերպի գաղափարը, զրուցել վատ սովորույթների մասին՝ բացահայտելու արատները: Խրախուսել սպորտային խմբակներ հաճախող աշակերտներին, անմիջական մասնակցություն ունենալ համադպրոցական և համաքաղաքային սպորտային միջոցառումներին: Կազմակերպել զրույց-քննարկումներ `Հեռու մնանք վնասակար սովորություններից թեմայով՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչների մասնակցությամբ: Անցկացնել համակցված դասեր բնագիտության և ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ՝ ավելի լավ պատկերացում կազմելու սեփական օրգանիզմի դերի և նրա վրա վատ ազդեցությունների մասին: Մինչդպրոցականների ֆիզիկական դաստիարակությունը ամբողջ դաստիարակության համակարգում զբաղեցնում է յուրահատուկ տեղ: Երեխաներին խրախուսել ֆիզիկական վարժություններ կատարել և հետևեն անձնական հիգենային

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ –Աշակերտների շրջանում բարձրացնել աշխատանքի հանդեպ սերը, փորձել ինքնուրույն աշխատանքներ կատարել տանը և դպրոցում՝ աթոռների վերանորոգում, դասասենյակի մաքրում: Կյանքի գլխագիր դարձնել՝ աշխատանքը բարիք է գաղափարը: Զրույցներ տանել ծնողների աշխատանքի դերի մասին:Կազմակերպել ստեղծագործությունների պատրաստում, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների համար խրախուսել աշակերտներին:Անցկացնել մաքրության շաբաթ դասարանում, սահմանել հերթապահություն, խրախուսել առավել մաքրասերներին: Մասնակցել Համադպրոցական, համաքաղաքային շաբաթօրյակներին, բարեկարգել դասարանը, մասնակցել ծառատունկի: Կարևորել մաքրության դերը նաև թաղամասում, բակերում, սեփական օրինակով վերափոխել անգամ մեծահասակներին Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Աշակերտների մոտ զարգացնել սերը բնության հանդեպ: Անցկացնել զրույցներ բնապահպանական թեմաներով: Մաքուր պահել շրջակա բնությունը: Դասարանում աճեցնել բույսեր, ապահովել դրանց խնամքը, մասնակցել ծառատունկի, բակում գարնանը աճեցնել ծաղիկներ: Ծանոթանալ տարբեր բույսերի կյանքի տևողությանը, նրանց օգտակարությանը: Մաքուր պահել շրջակա միջավայրը: Անցկացնել զրույց «Ես սիրում եմ բնությունը» թեմայով:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ –Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

Ծնող-դպրոց-դասղեկ համագործակցությունը ծնողի տեղեկացվածության գրավականն է: Ծնողներին ընդգրկել յուրաքանչյուր արտադպրոցական միջոցառումներին: Ամիսը մեկ անցկացնել ծնողական ժողովներ, ավելի հաճախ ծնող խորհրդի նիստեր: Օգտագործել և 'ծրագիրը,և ' համակարգիչը ծնող-դպրոց կապը ամրապնդելու համար: Մանրամասն ուսումնասիրել աշակերտների ընտանիքները, սերտ համագործակցել ծնողների հետ, պարզել ընտանիքներում տիրող բարոյական մթնոլորտը՝ ապահովելու ուսումնադաստիարակչական բարձր որակները, ձևավորելու մարդկային բարձր հատկանիշներով օժտված անհատներ:

Մեծ ուշադրություն դարձնել տանը տեղի ունեցող իրադարձություններին, օգնել երեխաներին՝ չենթարկվելու ընտանեկան բռնությունների: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, ծնողներից ստանալ տեղեկատվություն ընտանեկան պայմանների մասին,իրազեկել ծնողներին աշակերտների վարքի, ուսումնառության մասին: Ապահովել դպրոց-ընտանիք կապը՝ օրագրի միջոցով: Շաբաթվա վերջում ստուգել օրագրերը և նշումներ կատարել: Հանդիպումներ կազմակերպել դասավանդող ուսուցիչների և ծնողներիմիջև: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել չառաջադիմող աշակերտներին և կապ պահպանել նրանց ծնողների հետ: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են:Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում,երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ,ձգտումներ և հայացքներ:

ԴԱՍԱՐԱՆԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԹԵՄԱՏԻԿԱ

Հ/Հ	Թեմա	Կատարող անձ	Կատարման ժամկետ	Նշումներ
1	Դասարանում առկա խնդիրների վերհանում և քննարկում : Աշակերտների հետ միասին վեր հանել դասարանում առկա խնդիրները, ընտրել դասարանի ավագ, պատ-րաստել կազմակերպչական անկյուն	:Դասղեկ Աշակերտ	Սեպտեմբեր	
2	Իրավունքներ և պարտականություններ Կազմակերպել խաղ, որի նպատակն է	Դասղեկ Աշակերտ	Սեպտեմբեր	

	հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:			
3	« Անկախ եմ » իմ 32 – ամյա անկախություն Դասախոսություն	Դասղեկ Աշակերտ	Սեպտեմբեր	
4	<<44-օրյա պատերազմը>> Դիտել հայ զինվորների հերոսական դրվագները	Դասղեկ Աշակերտ	Սեպտեմբեր	
5	<< Իմ սիրելի ուսուցիչը>> Աշակերտներին նախապես հանձ-նարարել գրել շարադրություն և քննարկել	Դասղեկ Աշակերտ	Հոկտեմբեր	
6	Հանդուրժողականություն Կատարել խաղ -վարժություն, որի նպատակն է աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականության գաղափարը	Դասղեկ Աշակերտ	Հոկտեմբեր	
7	<<Ինչ է ընկերությունը և բարեկամությունը>> Պատի թերթի պատրաստում	Դասղեկ Աշակերտ	Հոկտեմբեր	
8	Ես սիրում եմ բնությունը Կազմակերպել մաքրության շաբաթ	Դասղեկ Աշակերտ	Հոկտեմբեր	
9	Հավատքը և եկեղեցին Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ մոտակա եկեղեցիներ	Դասղեկ Աշակերտ	Նոյեմբեր	
10	Պատի թերթ « Հայ մեծերը>>	Դասղեկ Աշակերտ	Նոյեմբեր	
11	«Իմ սիրելի սպորտաձևը» Սպորտային խաղերի կազմակերպում	Դասղեկ Աշակերտ	Նոյեմբեր	
12	Զրույց« Առողջ սնունդ , առողջ ապրելակերպ>> թեմայով	Դասղեկ Աշակերտ	Նոյեմբեր	
13	Բնական աղետներ: Ի՞նչ է երկրաշարժը:	Դասղեկ Աշակերտ	Դեկտեմբեր	
14	Ամանորին ընդառաջ Պատրաստվել դիմավորել Նոր տարին	Դասղեկ	Դեկտեմբեր	

15	Առաջին կիսամյակի ամփոփում	Դասղեկ Աշակերտ	Դեկտեմբեր	
16	Կիսամյակի ընթացքում կատարվելիք աշխատանքների քննարկում	Դասղեկ Աշակերտ	Հունվար	
17	<<Հայկական ավանդույթները, որով մենք հպարտանում ենք>>:	Դասղեկ Աշակերտ	Հունվար	
18	Աշխարհի մեծանունները հայերի և Հայաստանի մասին	Դասղեկ Աշակերտ	Հունվար	
19	Հայկական բանակի անցած ուղին Դասախոսություն և ֆիլմի դիտում<< Հայոց բանակ>> թեմայով	Դասղեկ Աշակերտ	Հունվար	
20	<<Ապահով համացանց>> թեմայով պատրաստել ռեֆերատներ և բուկլետներ	Դասղեկ Աշակերտ	Փետրվար	
21	<<Տյառնընդառաջ >> տոնի իմաստը Կազմակերպել ավանդույթը	Դասղեկ Աշակերտ	Փետրվար	
22	«Գիրքն իմ կյանքում» Ընթերցանություն Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններից	Դասղեկ Աշակերտ	Փետրվար	
23	<<Գարնանամուտ>> թեմայով զրույց և պաստառ	Դասղեկ Աշակերտ	Մարտ	
24	Կանանց միջազգային տոն՝ մարտի 8 Բացիկների պատրաստում	Դասղեկ Աշակերտ	Մարտ	
25	Շփման կուլտուրա , էթիկա թեմայով անցկացնել քննարկում-բանավեճ	Դասղեկ Աշակերտ	Մարտ	
26	Անրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմի դիտում Դիտել «Մայրիկ» ֆիլմը և քննարկել մոր կերպարը:		Ապրիլ	
27	<<Մայր իմ անուշ ու անգին>> Պատրաստել պատի թերթ	Դասղեկ Աշակերտ	Ապրիլ	
28	«Ես սիրում եմ բնությունը»: Կազմակերպել շաբաթօրյակ	Դասղեկ Աշակերտ	Ապրիլ	
29	Այցելություն մոտակա եկեղեցի« Սուրբ Զատկի» տոնին	Դասղեկ Աշակերտ	Ապրիլ	

30	Ելույթ՝ նվիրված ապրիլի 24-ին աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն: Պաստառի պատրաստում Ասմունք Պարույր Սևակ «Անլռելի զանգակատուն»	Դասղեկ Աշակերտ	Ապրիլ	
31	Զրույց «Բախտավորությունն այն է կյանքում, որ ձեռքեր ունես կառուցելու…» Աշխատավորների միջազգային օրվա առաջացումը	Դասղեկ Աշակերտ	Մայիս	
32	Ելույթ՝ նվիրված մայիսի 9-ին	Դասղեկ Աշակերտ	Մայիս	
33	Անցկացնել քննարկում << Նրա մասին , ով ամեն օր իմ կողքին է>> թեմայով:	Դասղեկ Աշակերտ	Մայիս	
34	Զրույց-քննարկում «Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին»: Ամփոփել ուսումնական տարին, հասկանալ ինչ գիտելիքներ և ձեռքբերումներ ունեցան այս ուսումնական տարում:		Մայիս	

ԴԱՍԱՑՈՒՑԱԿ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ	ԵՐԵՔՇԱԲԹԻ	ՉՈՐԵՔՇԱԲԹԻ	ՀԻՆԳՇԱԲԹԻ	ՈՒՐԲԱԹ
Մաթեմ.	Ռուսերեն	Մաթեմ.	Մայրենի	Մայրենի
Մայրենի	Մայրենի	Իմ հայրենիք	Անգլերեն	Ֆիզկուլտ.
Ռուսերեն	Կերպարվեստ	Անգլերեն	Իմ հայրենիք	Ռուսերեն
Անգլերեն	Մաթեմ.	Բնություն	Բնություն	Տեխնոլ.
Մայրենի	Թվ. գրագ.	Մայրենի	Մաթեմ.	Երաժշտություն
Մաթեմ.	Ֆիզկուլտ.	Տեխնոլ.	Մայրենի	Ազգ . երգ ուպար

Հերթապահություն

Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ
Բաղդասարյան Մարի	Բաղդասարյան Մարի	Բաղդասարյան Տիգրան	Բաղդասարյան Մարի	Բաղդասարյան Մարի
Բաղդասարյան Տիգրան	Ալեքսանյան Մանե	Ալեքսանյան Մանե	Ալեքսանյան Մանե	Ալեքսանյան Մանե

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կատարել աշակերտների հաճախումների հաշվառում:

Հետևել աշակերտների կարգապահական կանոնների պահպանմանը:Հետևել աշակերտների արտաքին տեսքին:

Հետևել աշակերտների անձնական հիգիենային:

Հետևել դասասենյակի մաքրությանը՝ ըստ նախապես կազմված հերթապահության գրաֆիկի:

Ստուգել օրագրի, դասագրքերի և տետրերի առկայությունը ըստ դասացուցակի:

Դասերի ընթացքում հավաքել բջջային հեռախոսները:
Հետևել, որ աշակերտները դասամիջոցներին չբղավեն, չվազեն և չհրմշտեն իրար:
Հնարավորինս կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները:

Նախորդ օրը բացակայած աշակերտներից պահանջել բժշկի տեղեկանքկամ ծնողի գրություն:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հետևել աշակերտների դպրոցական, դասարանական կանոնների պահպանմանը:

Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում:

Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանցծնողների հետ:

Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշումներկայացնել:

Զրուցել անհարգելի բացակայող և հաճախակի ուշացող աշակերտների ննրանց ծնողների հետ:

Ըստ գրաֆիկի հերթապահության կազմակերպում դասարանում:

ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հետևել աշակերտների դպրոցական կանոնների պահպանմանը:

Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին:

Ծնողներին տեղեկացնել իրենց երեխաների ստացած գնահատականների մասին:

Լավ սովորող աշակերտների միջոցով օգնել թույլ աշակերտներին՝ բարձրացնելու առաջադիմությունը:

Կազմակերպել դասարանին հատկացված դպրոցամերձ տարածքի մաքրումը:

Հանդիպել ներառական կրթության մեջ ներգրավված աշակերտների ծնողների և հատուկ մանկավարժների հետ:

ԿԻՍԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կիսամյակի ամփոփում:

Կիսամյակային հաշվետվության հանձնում:

Ծնողական ժողով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դաստիարակչական աշխատանքների ամփոփում:

Ծնողական ժողով:

Տարեկան հաշվետվության հանձնում :

Դասագրքերի վերանորոգում և հանձնում գրադարան:

Դասասենյակի մաքրում և հանձնում:

Լրացնել աշակերտների անձնական գործերը: